ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 6. Ոստիկանության խնդիրների կատարմանը Լիազոր մարմնի ուսումնական հաստատության ոստիկանության ծառայողներին, սովորողներին, վերապատրաստում անցնող անձանց և ոստիկանության զորքերի ծառայողներին ներգրավելը

(վերնագիրը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 17.12.14 ՀՕ-220-Ն, 16.12.22 ՀՕ-460-Ն)

Հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում կարող են ներգրավվել Լիազոր մարմնի ուսումնական հաստատության **ոստիկանության ծառայողները,** սովորողները, ինչպես նաև վերապատրաստում անցնող անձինք՝ Լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով: Նման դեպքերում նրանց վրա տարածվում են ոստիկանության ծառայողների՝ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

Հասարակական կարգի պահպանման և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքներում ոստիկանության զորքերի զինծառայողների ներգրավումն իրականացվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

(6-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-4-Ն, խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 17.12.14 ՀՕ-220-Ն, 23.03.18 ՀՕ-272-Ն, 16.12.22 ՀՕ-460-Ն)